ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ը՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՕՐ

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Մայրենի լեզուների միջազգային օրվա առիթով, փետրվարի 20-ին, Թբիլիսիի «Ամբասադոր» հյուրանոցի կոնֆերենց սրահում, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմը եւ Վրաստանի կրթության ու գիտության նախարարությունը երկրի հայերենի եւ ադրբեջաներենի ուսուցիչների համար կազմակերպել էին ընդունելություն:

Վրաստանի պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին եւ կրթության ու գիտության նախարարի տեղակալ Լիա Գիգաուրին ներկաներին շնորհավորեցին Մայրենի լեզուների միջազգային օրվա առիթով, պետության անունից շնորհակալություն հայտնեցին նրանց եւ հավաստեցին, որ այսուհետ եւս կշարունակեն աջակցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ լեզվի եւ մշակույթի պաշտպանությանը: «Մեր նպատակն է, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ովքեր մայրենի լեզվով են դպրոցն ավարտում, լավ տիրապետեն նաեւ պետական լեզվին: Պետք է դաստիարակենք քաղաքացիներ, ովքեր կդառնան հասարակության լիիրավ անդամներ՝ պահպանելով իրենց ինքնությունը»,- նշեց պետնախարարը:

Լիա Գիգաուրին իր ելույթում կարեւորեց օրվա նշանակությունը, ընդգծեց Վրաստանի սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուր մարդու մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքի մասին: Խոսեց ազգային փոքրամասնությունների լեզուների չափորոշիչների հաստատման, ուսուցիչների կողմից լեզվական քաղաքականության ճիշտ ներդրման ու շեշտադրումների, լեզվի հմայքի շուրջ:

Իրենց շնորհավորական ելույթներում «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի վարչապետի օգնական Սավալան Միրզոեւը արժեւորեցին մայրենի լեզվի ուսուցիչների դերն ու նրանց վաստակը սերունդներ կրթելու գործում, ընդգծեցին, որ Վրաստանը, փոքրամասնությունների լեզուների ուսուցման տեսակետից կարող է լավ օրինակ հանդիսանալ շատ երկրների համար եւ հույս հայտնեցին, որ մայրենիի հետ միասին, ազգային դպրոցների շրջանավարտները կկարողանան էլ ավելի լավ տիրապետեն նաեւ պետական լեզվին:

Ավարտին, Քվեմո Քարթլիի եւ Սամցխե-Ջավախեթիի հանրային ոչ վրացալեզու դպրոցների հայերենի եւ ադրբեջաներենի 50 ուսուցիչներ պարգեւատրվեցին «Մայրենի լեզվի ուսուցման ու պաշտպանության գործում ներդրած ավանդի համար» պատվոգրերով եւ խորհրդանշական նվերներով:

Սամցխե-Ջավախեթիում պարգեւատրված ուսուցիչների անունից գեղեցիկ վրացերենով ելույթ ունեցավ Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի Ռոզա Պետրոսյանը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

«ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

Ուրախ եմ, որ մեր երկրամասի ուսուցիչների հետ միասին մասնակցեցի «Մայրենի լեզվի» տոնի միջոցառմանը: Ցանկանում եմ օգտվել առիթից եւ մեր դպրոցի մանկավարժների անունից խորին շնորհակալություն հայտնել հրավերի համար: Մեզ համար մեծ պատիվ էր տոնի կապակցությամբ մայրաքաղաքում միջոցառումներին մասնակցությունը: Համոզված եմ, որ այս օրը կրկին անգամ հաստատում է, որ մենք համատեղ հոգում ենք երկրի պայծառ ապագայի, մեր սաների կրթության հարցում: Խորին շնորհակալություն Վրաստանի իշխանությանը, կրթության եւ գիտության նախարարությանը, պետության ֆինանսավորմամբ մայրենի լեզվով հանրային կրթության իրականացման համար, շնորհակալություն նաեւ Հայաստանին, որ հոգում է ու շահագրգռված է մեր հարցերով:

Ասեմ, որ Ախալցիխեին կոչում են հանդուրժողականության քաղաք: Մեր դպրոցն էլ կարելի է համարել հանդուրժողականության խորհրդանիշ: Մեզ մոտ զգացվում է ինտեգրման լիարժեք մատչելիությունն ու աջակցությունը: Այսօրվա դրությամբ, դպրոցի բազում շրջանավարտներ սովորում են երկրի վրացական համալսարաններում եւ վրացերենով ստանում բարձրագույն կրթություն:

Ուրախությամբ նշում եմ նաեւ, որ մեծ ազդակ հաղորդեց բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստման ծրագիրը, որի շնորհիվ աշակերտները մայրենի լեզվով հանձնած մեկ քննությամբ հնարավորություն ստացան ընդունվել բուհ եւ ստանալ բարձրագույն մասնագիտական կրթություն:

Ինչ վերաբերում է մանկավարժներիս, ապա մենք ակտիվ մասնակցություն ենք ցուցաբերում կրթության եւ գիտության նախարարության կողմից նախաձեռնած տարբեր նախագծերին ու ծրագրերին:

Ըստ իս, նման հանդիպումները նշանակալից են բազմադարյա բարեկամության խորացման տեսանկյունից:

ՌՈԶԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի

ՕԶՆԻ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 23-ին Վրաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարարությունում անցկացվեց «Վրաստանը իմ հայրենիքն է» ժողովածուի շնորհանդեսը, որի մեջ ամփոփված բանաստեղծությունների հեղինակները, բացառապես ազգային փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդ ստեղծագործողներն էին:

Ժողովածուում ներառված են 2015 թվականին հայտարարված ստեղծագործելու ոճով շնորհված Թբիլիսիի եւ Վրաստանի մյուս տարածաշրջաններում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդ ստեղծագործողների լավագույն գրական աշխատանքների մրցույթում ընտրված գործերը: Անցկացվեց նաեւ Շոթա Ռուսթավելու «Ընձեռնավորը» պոեմի աուդիո ներկայացման շնորհանդեսը, որը նախարարության նախաձեռնությամբ վրացերենով, հայերենով եւ ադրբեջաներենով ձայնագրվել է DVD սկավառակի վրա:

Վրաստանի սպորտի եւ երիտասարդության գործերով նախարարության նախաձեռնությամբ իրականացված «Վրաստանը իմ հայրենիքն է» նախագծի նպատակը, Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդների ստեղծագործելու ունակությունը ներկայացնելու հնարավորության ընձեռումն էր: Վերոնշյալ նախագծի շրջանակներում, «Վրաստանը իմ հայրենիքն է» բանաստեղծական ժողովածուում հեղինակներն ազատ ընտրություն ունեին ներկայացնելու ցանկացած լեզվով գրած բանաստեղծությունը, ոչ վրացերենով բանաստեղծության հետ տեղադրել վրացական թարգմանությունը: Ժողովածուում տպագրվել են մի քանի տասնյակ երիտասարդների բանաստեղծությունները:

Նախագծին մասնակցեցին Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի գյուղի հանրային դպրոցի աշակերտները: Նախագծին մասնակցեցին 10-րդ դասարանի աշակերտուհի Անահիտ Հանեսյանը, 11-րդ դասարանցիներ Ռուզաննա Մանուկյանը, Սրբուհի Ավագյանը եւ Սյուզաննա Բլիկյանը:

Ավելացնենք, որ ժողովածուում տեղ էին գտել նաեւ ուսանողների բանաստեղծությունները, մասնավորապես՝ Երեւանի համալսարանի ուսանողուհի, Նինոծմինդացի Արաքսյա Սնխչյանի, Արմինե Գեւորգյանի, Անա Ծառուկյանի, վալեցի Վարսենիկ Վարդանյանի, Սվետլանա Մելքոնյանի եւ Սեդա Պետրոսյանի բանաստեղծությունները:

Նույն ժողովածուում տպագրվել են նաեւ Քվեմո Քարթլիի եւ Կախեթիի տարածաշրջանների ադրբեջանական դպրոցները ներկայացնող աշակերտների ադրբեջաներով գրած բանաստեղծությունները:

Երիտասարդ հեղինակները ըստ ցանկության, ընթերցեցին իրենց բանաստեղծությունները եւ ջերմ ընդունելություն գտան շնորհանդեսի մասնակիցների կողմից:

Օզնեցի Անահիտ Հանեսյանը մեզ հետ զրույցում ասաց, որ իր կյանքում այս օրը նշանակալից է, եւ ուրախ է, որ իր բանաստեղծությունները տպագրվեցին այս ժողովածուում, դա իր համար մեծ պատիվ է: Այստեղ ինքը ծանոթացել է հայ, ադրբեջանցի եւ քիստ հասակակիցների հետ: Իրենք անպայման կբարեկամանան, եթե առաջիկայում էլ նման ժողովածու տպագրվի, անպայման կմասնակցեն:

Իրոք, Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների համար նման նախագծերի իրականացումը մեծ նշանակություն ունի: Դա նրանց վրացական հասարակայնությունում ինտեգրման հիանալի հնարավորություն է ընձեռում:

ՄԻՐԱՆԴԱ ԻԱԿՈԲԻՉԵ

Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի գյուղի հանրային դպրոցի վրացերենի՝ որպես երկրորդ մայրենի լեզվի ուսուցչուհի

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

Ասում են՝ աշխատասիրությունը հաջողության գրավականն է... Մենք արդեն համոզվել ենք դրանում, վառ ապացույց ունենալով մեր սիրելի մանկավարժին՝ հանձինս Հեշտիայի Վ.Հովսեփյանի անվան թիվ 1 հանրային դպրոցի ե'ւ տնօրեն, ե'ւ «Քաղաքացիական կրթություն» առարկայի ուսուցչուհի Նանե Հովսեփյանի:

...Դպրոցի դահլիճը զարդարուն է ու մարդաշատ: Հավաքույթի նպատակը, հիրավի, հուզիչ է ու ոգեւորող: Դպրոցի տնօրինության ղեկավարությամբ ու 10-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ գրված նախագծերից մեկը եւս արժանացել էր հաղթանակի: Ամերիկյան USAID, PH international միջազգային կազմակերպության հովանավորության «Ապագայի սերունդ» նախագծի եւ Ախալցիխեի երիտասարդական կենտրոնի համագործակցությամբ ու աջակցությամբ, իրականացավ բոլորիս համար ցանկալի ու սպասելի երազանքը՝ Հեշտիայի հրաշագեղ բնության ու անձեռակերտ հրաշալիքների պատկերներով մագնիտների պատրաստումը: Այս նախագիծը հետապնդում էր նաեւ մի ուրիշ նպատակ. մագնիտների վաճառքից ստացված գումարով վերանորոգվելու է դպրոցի ճաշարանը, որը աշակերտների համար առավել հարմարավետ պայմաններ կունենա:

Մագնիտներն արդեն պատրաստ էին, ու դպրոցը պատրաստվում էր մեծ շուքով ներկայացնել դրանք հանրությանը: Միջոցառումը բաղկացած էր երկու մասից՝ ձեռագործ աշխատանքների եւ մագնիտների շնորհանդես:

Հանդիսությանը ներկա էին մեծ թվով հյուրեր՝ Թբիլիսիի քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» նախագծի «Փոքր շահում» ծրագրի կոորդինատոր Իրինա Քիբրոծաշվիլին, Ախալցիխեի երիտասարդական կենտրոնի տնօրեն Մակա Սուդաձեն, Նինոծմինդայի մունիցիպալիտետի գամգեոբայի մշակույթի բաժնի պետ Լաուրա Վարժապետյանը, մունիցիպալիտետի տեղական սակրեբուլոյի պատգամավոր Սամվել Դարբինյանը, գյուղի ներկայացուցիչ Վանիկ Նիկողոսյանը, լրագրողներ եւ ուրիշներ: Իրենց սրտի խոսքերով ու շնորհավորանքներով հանդես եկան նաեւ հյուրերը:

Եվ այս ամենը դպրոցի տնօրեն Նանե Հովսեփյանի աշխատասիրության, հոգատարության լավագույն արդյունքն է, դպրոցն ու կրթահամակարգը բարձր մակարդակի վրա պահելու նրա ձգտումն ու մատաղ սերնդի կրթության գործին անմնացորդ նվիրվածությունը:

ԹԱՄԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

գ.Հեշտիա, Նինոծմինդայի մունիցիպալիտետ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Î ÈÆØ²

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՏԱՔՈՒԹՅՈՒՆ

Լսել եմ, որ 2015 թվականը աչքի է ընկել ջերմաստիճանային խիստ փոփոխություններով: Հետաքրքիր է, ի՞նչ կանխագծումներ կան 2016-ի կապակցությամբ:

Վ. Պողոսյան

Բաթումի

Իրոք, 2015-ը սահմանեց կլիմայական մի շարք ռեկորդներ: Այդ թվում՝ նաեւ ջերմաստիճանային: Իսկ ինչ վերաբերում է 2016 թվականին, ապա տարվա առաջին ամիսը՝ հունվարը, նոր կլիմայական ռեկորդ է գրանցել՝ դառնալով ամենատաք հունվարը վերջին 135 տարվա ընթացքում, երբ ջերմաստիճանը, ըստ Ցելսիուսի, միջին հաշվով 1,13 աստիճանով բարձր է եղել միջին վիճակագրական մեծություններից: Այդ մասին հայտնել են Climate Central նախագծի կլիմայագետները:

Անցյալ տարին, ըստ ամենատարբեր գնահատականների, Օդերեւութաբանության համաշխարհային կազմակերպությունից՝ NASA-ից մինչեւ Ռոսգիդրոմետ, ամենատաքն է ճանաչվել դիտարկումների ամբողջ պատմության ընթացքում:

Նոր՝ 2016 թվականը, ինչպես գրում են Climate Central նախագծի կլիմայագետները, շարունակել է այդ թրենդը. անցած ամիսն ամենատաք հունվարն է դարձել օդերեւութաբանական դիտարկումների ամբողջ պատմության ընթացքում՝ ռեկորդ սահմանելով ջերմաստիճանի հսկայական պաշարով: Այդ «ձեռքբերման» շնորհիվ, մոլորակի վրա ջերմաստիճանն արդեն չորրորդ ամիսն է՝ կայունորեն նորմայից բարձր է մեկ աստիճանով:

Տաքացումը, ինչպես ցույց են տալիս NASA-ի քարտեզները, վերաբերել է մոլորակի փաստորեն բոլոր տարածաշրջաններին՝ հատկապես իրեն դրսեւորելով Հյուսիսային Ամերիկայի եւ Եվրասիայի արկտիկական եւ անդրբեւեռային մարզերում, որտեղ ջերմաստիճանները սովորականից բարձր են եղել Ցելսիուսի 4-12 աստիճանով, ինչպես նաեւ Միջին Ասիայում, որտեղ նույն պատկերն է դիտվել:

Î°Ü¸²Ü²Î°ðä

ԿՈՇԻԿՆԵՐ՝ ԸՍՏ ՀՈՐՈՍԿՈՊԻ

Հիմա մեծ ուշադրություն են հատկացնում կոնկրետ մարդուն առնչվող կենդանակերպի նշաններին, անում տարբեր գուշակություններ: Լսել եմ, որ կան գուշակություններ, որոնց համաձայն, հագուստի, զարդարանքի եւ այլնի ընտրությունն էլ պետք է կատարվի կենդանակերպի նշանից ելնելով: Որքանո՞վ է դա իրական:

Ա.Մելիքյան

Թբիլիսի

Որքան էլ տարօրինակ լինի, իրոք, նման դեպքեր պատահում են: Օրինակ, Christian Louboutin ֆրանսիական ընկերությունը կոշիկի նոր շարք է ստեղծել ըստ կենդանակերպի նշանների, եւ այդ կոշիկները վաճառվելու են բացառապես Moda Operandi ռեթեյլերի առցանցհարթակում: Կոշիկը կարված է մի քանի գույներով՝ սեւ, մուգ կապույտ ու մանուշակագույն, եւ զարդարված է ոսկյա ուլունքներով ու փայլուքներով:

Շարքը ներկայացված է երկու մոդելներով՝ բաց քթով կոշիկներով եւ բալետկաներով: Նախնական պատվերը կարելի է ձեւակերպել փետրվարից, իսկ վաճառքում կոշիկը կհայտնվի ամռանը: Գները տատանվում են՝ զույգը 2 հազարից մինչեւ 2,2 հազար դոլար:

Christian Louboutin ֆրանսիական բրենդը հիմնադրվել է 1992 թվականին:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ծովամթերք, ընկուզեղեն եւ սերմեր, ցորենահատիկով հաց, ծավարեղեն, լարդ, թթխմոր:

Այս մթերքները նպաստում են էներգիայի առաջացմանը, բարելավում հիշողությունը, նվազեցնում են ջղագրգռությունը, թուլացնում նյարդային բնույթի ցավերը:

Հիշեք. Բ խմբի վիտամիններն ամբողջ հզորությամբ աշխատում են միայն այն դեպքում, երբ օրգանիզմ են մուտք գործում իրար հետ:

Ծովամթերքն ու ծովային ջրիմուռները յոդ են պարունակում, որն անհրաժեշտ է վահանաձեւ գեղձի նորմալ կենսագործունեության համար: Յոդի պակասի դեպքում, վահանաձեւ գեղձի կողմից հորմոնների արտազատումը թուլանում է, ինչը հանգեցնում է ընդհանուր թուլության, այտուցների, նյութափոխանակության դանդաղեցման, ճարպակալման, հիշողության վատթարացման:

Թվարկված մթերքները պետք է ուտել շաբաթվա մեջ գոնե 2-3 անգամ:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ՄԹԵՐՔՆԵՐ՝ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ԿԱՏԱՐՅԱԼ ՄԱՇԿ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Կոկոսի յուղը պատկանում է այն յուղերի տեսակին, որն օգնում է մաշկը թարմ եւ երիտասարդ մնալուն: Այն հակաբակտերիալ եւ հակաբորբոքային բաղադրություն ունի, որը կարող եք օգտագործել որպես դեմքի եւ մարմնի քսուք, ինչպես

նաեւ օգտակար է այն ուտել օրական 1 ճաշի գդալ:

Կանաչ թեյը կօգնի պայքարել մաշկի երիտասարդացման համար: Այն ձեզ կհանգստացնի դժվար աշխատանքից հետո: Օրական մի քանի բաժակ թարմ պատրաստած կանաչ թեյ օգ-

տագործելուց հետո, որոշ ժամանակ անց, ձեր մաշկը շնորհակալ կլինի ձեզ:

Սպանախը առողջ դեմքի գույն ունենալու համար հրաշալի մթերք է:

Այս բույսը հրաշալի պահեստ

է ֆոլաթթվի, երկաթի, վիտամին E-ի, պարունակում է նաեւ մանրաթելեր, բուսական սպիտակուց եւ ասկորբինաթթու: Երբ դուք ուտում եք սպանախ, դուք մաքրում եք մաշկը ոչ միայն դրսից, այլ նաեւ ներսից: Պարզապես ներառեք այն ձեր ամենօրյա սննդի մեջ ու կտեսնեք ձեր մաշկի դրական փոփոխությունը: Նեխուրը եւս այն մթերքներից է, որն օգնում է կատարյալ մաշկ ունենալուն:

Նեխուրը հարուստ է K, C, PP, B1, B2 վիտամիններով, ինչպես նաեւ պարունակում է շաքար, եթերայուղ, կալիում, կալցիում, ֆոսֆոր, ջուր, որը օգտագործելուց ձեր մաշկը կպաշտպանվի ջրազրկումից: Կարգավորում է արյան շրջանառությունը եւ օգ-

նում նվազեցնել ադրենալինի մակարդակը: Բժշկության մեջ կիրառվում է հեւոցի եւ շնչառական ուղիների այլ հիվանդությունների ժամանակ:

Արդյունավետ են նաեւ արեւածաղկի, դդմի, կտավատի, քունջութի սերմերը, որոնք մեծ քանակությամբ պարունակում են սելեն եւ սպիտակուցներ, որոնք էլ հեռացնում են ձեր մաշկի փոքր կնճիռները: Այն պատանիներին,

որոնց դեմքին պարբերաբար պզուկներ են հայտնվում, խորհուրդ է տրվում դդմի սերմեր ուտել:

Օգտակար մթերքների շար-

քին է դասվում նաեւ գազարը, որը պարունակում է A վիտամին եւ հաճախակի օգտագործումը նվազեցնում է մաշկի քաղցկեղի հավանականությունը, մաշկը դարձնում է առողջ ու նուրբ:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Մարդ իր կյանքի ամեն օրը պիտի ապրի այնպես, ինչպես դա իր կյանքի վերջին օրն է: Պիտի հասցնի սրիկային ասել, որ նա սրիկա է, պիտի հասցնի ատել, սիրել, հավատալ: Վաղը կարող է ուշ լինել:

ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
(1932-1994)
Հայ գրող

Լավ է զղջալ հենց սկզբից, վերջում զղջալն օգուտ չունի:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Ով ազատություն եւ ճշմարտություն չի սիրում, կարող է դառնալ ստոր մարդ, բայց մեծ՝ նա երբեք չի լինի:

ՎՈԼՏԵՐ
(1694-1778)
Ֆրանսիացի փիլիսոփա

Միայն իմաստուններն են տիրում գաղափարներին, ինչ վերաբերում է մարդկության մեծ մասին, ապա գաղափարներն են տիրում նրանց:

ՍԱՄՈՒԵԼ ԹԵՅԼՈՐ ՔՈԼՐԻՋ
(1772-1834)
Անգլիացի բանաստեղծ

Անձնական հատկանիշներից ամենից անմիջականորեն մեր երջանկությանը նպաստում է ուրախ բարքը:

ԱՐԹՈՒՐ ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ
(1788-1860)
Գերմանացի փիլիսոփա

Մոլորվելը հատուկ է յուրաքանչյուրին, բայց իրենց մոլորության մեջ համառում են միայն հիմարները:

ՄԱՐԿՈՍ ՏՈՒԼԻՈՍ ՑԻՑԵՑՈՆ
(մ.թ.ա. 106-մ.թ.ա. 43)
Հռոմեացի փիլիսոփա

Իմացությունը նման է ծովի, ով թպրտում ու ճողփում է մակերեւույթին, միշտ ավելի է աղմկում ու դրանով ավելի շատ ուշադրություն է հրավիրում իր վրա, քան մարգարիտ որոնողը, որը, առանց ավելորդ աղմուկի, գանձեր որոնելու համար սուզվում է մինչեւ անհայտ խորքերի հատակը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ ԻՐՎԻՆԳ
(1783-1859)
Ամերիկացի արձակագիր

Մարդիկ ծիծաղելի են լինում այն ժամանակ, երբ ուզում կամ ձգտում են լինել ոչ այն, ինչ կան:

ԼՈՒՍԻՆԵ Ա.
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à²Ü°ð

** - Ձեր մասնագիտությունը:*

- Կրկեսում դանակներ եմ նետում ասիստենտիս վրա...

- Դատվածություն ունե՞ք:

- Մեկը:

- Ինչի՞ համար:

- Աշխատանքային խոտանի...

** Կինը՝ հայելու առջեւ.*

- Սիրում եմ բարակ մեջքս, գեղեցիկ կոնքերս... եւ ատո'ւմ եմ ճարպի այն շերտը, որ ծածկում է այդ ամենը...

** Կինը՝ ամուսնուն.*

- Սիրելիս, առավոտյան մտա քո գրասենյակ, բաճկոնիդ գրպանից 500 դոլար վերցրեցի:

- Շատ էլ լավ ես արել... երեք ամսից ավելի է, ես այնտեղ չեմ աշխատում...

** Երկու ընկեր՝ տարիներ անց.*

- Հիշում եմ, դու մի աղջկա էիր սիրում: Եվ ի՞նչ, ամուսնացա՞ր նրա հետ:

- Չէ', չամուսնացա:

- Իսկ դու պատմեցի՞ր նրան հարուստ հորեղբորդ մասին:

- Հա', նա հիմա հորեղբորս կինն է:

** Աշակերտը՝ ուսուցչուհուն.*

- Հայրիկս ասում է, որ մենք առաջացել ենք կապիկներից:

- Ձեր ընտանիքի պատմությունը մեզ չի հետաքրքրում:

** Հարսանիքից հետո ամուսինը դիմում է իր երիտասարդ կնոջը.*

- Թանկագի'ն ս, պետք է հայտնեմ, որ ես շատ հաճախ առանց պատճառի խանդում եմ:

- Մի' հուզվիր, սիրելի'ս, դու ստիպված չես լինի խանդել առանց պատճառի:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՐԵՔ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐ ԴԱՐՁԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

Հայաստանի նախագահական նստավայրում Հայաստանի Հանրապետական եւ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունների միջեւ ստորագրվեց քաղաքական համագործակցության մասին համաձայնագիր:

Համաձայնագիրը ՀՀԿ-ի կողմից ստորագրել է կուսակցության փոխնախագահ Արմեն Աշոտյանը, իսկ ՀՅԴ-ից՝ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը:

Փետրվարի 25-ին, Հայաստանի կառավարության նիստի մեկնարկից առաջ, վարչապետ Հովիկ Աբրահամյանը շնորհավորեց ՀՅԴ-ական նորանշանակ նախարարներին: «Քաղաքական համաձայնագիր է կնքվել, եւ երեք պորտֆել հատկացվել է ՀՅԴ-ին: Ուզում եմ շնորհավորել նորանշանակ էկոնոմիկայի նախարար ***Արծվիկ Մինասյանին***, Տարածքային կառավարման եւ զարգացման նախարար ***Դավիթ Լոբյանին***, Կրթության եւ գիտության նախարար ***Լեւոն Մկրտչյանին***, ինչպես նաեւ ***Արմեն Երիցյանին***, ով վերանշանակվել է արտակարգ իրավիճակների նախարար: Ցանկանում եմ նրանց բեղմնավոր աշխատանք»,- ասաց Հովիկ Աբրահամյանը:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում քննարկվեց Հայաստանի սփյուռքի նախարարության 2015թ. ընթացքում կատարված հիմնական աշխատանքների, Հայաստանի կառավարության 2015թ. գործունեության միջոցառումների ծրագրի, գերակա խնդիրների կատարման եւ գնահատված կատարողականի հաշվետվությունը:

Ինչպես նշեց սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, նախարարությունն ակտիվորեն մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստերի նախապատրաստական եւ կազմակերպչական բոլոր աշխատանքներին:

Ըստ նախարարի, Հայոց լեզվի տարածման եւ հայ երիտասարդության շրջանում հայրենի իմացության մակարդակի բարձրացման (այդ թվում՝ նորարարական մեխանիզմների կիրառմամբ) նպատակով, ձեռնարկվել են աշխատանքներ՝ մի քանի ծրագրերի շրջանակներում:

Նախարար Հակոբյանը հայտնել է նաեւ, որ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն», «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի եւ «Սփյուռք» ամառային դպրոց» 2015 թվականի ծրագրերը եւ միջոցառումների ցանկը:

Հովիկ Աբրահամյանը դրական գնահատելով սփյուռքի նախարարության աշխատանքը՝ ընդգծեց, որ գերատեսչության կողմից մեծ աշխատանք է կատարվել, եւ 2015 թվականին նախարարության ակտիվ մասնակցությունը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին՝ ակնառու է եղել: Գործադրի ղեկավարը կարեւորել է սփյուռքահայ գործարարների ակտիվ ներգրավվածությունը Հայաստանի տնտեսությունում, եւ այդ համատեքստում անհրաժեշտ համարել Հայաստանում սփյուռքահայ գործարարների մասնակցությամբ բիզնես-ֆորումների անցկացումը:

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ

Փետրվարի 23-ին Հայաստանի ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը եւ Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային տնօրեն Մերսի Թեմբոնը ստորագրեցին վարկային համաձայնագիր:

Համաշխարհային բանկը համաձայնագրով Հայաստանին կտրամադրի 55 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ՝ 25 տարի մարման ժամկետով, որից 14,5-ը՝ արտոնյալ:

Համաշխարհային բանկի մաս կազմող Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի հետ ստորագրված «Տեղական տնտեսության եւ ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» վարկային համաձայնագրով նախատեսվում է բարելավել Հայաստանի ենթակառուցվածքային ծառայություններն ու ինստիտուցիոնալ կարողությունները՝ նպաստելով Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի եւ Լոռու մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության ավելի մեծ մասնակցությանը:

Ծրագիրը կօժանդակի ընտրված մարզերում զբոսաշրջության մասնակցության աճին, որը տեղի կունենա ենթակառուցվածքներում ներդրումների, քաղաքային վերածննդի, մշակութային ժառանգության վերականգնման, ինչպես նաեւ մասնավոր հատվածի ներդրումների խթանում ապահովող համալիր մոտեցման իրականացման միջոցով:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ԵՏ ԿԱՆՉՎԵՑ՝ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Գերմանիայի Բունդեսթագը փետրվարի 25-ին քննարկեց Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունման հարցը, որը ներկայացվել էր «Դաշինք 90/Կանաչներ» կուսակցության կողմից: Բանաձեւի վերաբերյալ քվեարկություն չի կայացել. որոշվել է հարցը լրացուցիչ քննարկել եւ քվեարկել մինչեւ ապրիլի 24-ը:

Նշենք, որ Գերմանիայի խորհրդարանը 2005 թվականին ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշում: Բունդեսթագի որոշման մեջ, սակայն, չի օգտագործվել Հայոց ցեղասպանություն եզրը, այլ նշվել է «հայերի կոտորածներ»: 2015 թվականի մարտին Գերմանիայի խորհրդարանի նախագահ Նորբերթ Լամերտը հայտարարել էր, որ «Օսմանյան կայսրությունում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ողջ աշխարհի աչքի առաջ, տեղի ունեցածը ցեղասպանություն էր: Եվ դա 20-րդ դարի վերջին ցեղասպանությունը չէր»:

Ապրիլի 24-ին, Բունդեսթագում լսումներին ընդառաջ, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը հայտարարել էր, որ ինքը այն պատգամավորների կողքին է, ովքեր կողմ են հայերի զանգվածային սպանությունները «ցեղասպանություն» անվանելուն:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՀԱՅԿՅԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 24-ին Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ «Հայկյան» մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում, մրցանակներ շնորհվեցին 9 անվանակարգերում:

Մրցանակաբաշխության ընթացքում հանձնվել են նաեւ հատուկ մրցանակներ: Այս մրցանակները հանձնել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Միջոցառմանը ելույթ ունեցավ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը:

Մրցանակաբաշխության ընթացքում ելույթ ունեցավ նաեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Մրցանակաբաշխության ընթացքում մրցանակներ են շնորհվել հետեւյալ անվանակարգերում. Լավագույն երիտասադական հասարակական կազմակերպության (ՀԿ) Երեւան քաղաքում, Լավագույն երիտասարդական ՀԿ մարզում, Ինքնատիպ երիտասարդական նախագիծ, Ուսանողական խորհրդի լավագույն նախագահ, Լավագույն միջբուհական ծրագիր, Լավագույն երիտասարդական հաղորդում, Լրատվական նախագիծ, Լավագույն միջազգային կառույց, Լավագույն երիտասարդական գիտական նվաճում, Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին:

ՎԵՐԱՅՁՎՈՒՄ Է ՆԵՐԿՐՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱԱՀ-ՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹԸ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի առաջարկով երկրի կառավարության նիստի օրակարգ մտցվեց լրացուցիչ հարց՝ ԵՏՄ երկրներից ներկրված մեքենաների արժեքի ավելացված հարկով (ԱԱՀ) հարկման անցումային դրույթները վերացնելու վերաբերյալ: «Այս ամսվա ընթացքում հանրային քննարկման առարկա է դարձել ԵՏՄ երկրներից մեր քաղաքացիների կողմից ներկրված մեքենաների ԱԱՀ հարկման խնդիրը: Այն ԵՏՄ համար նոր չէ: Վերջին մեկ տարվա ընթացքում. ՀՀ կառավարությունն անընդհատ ու ակտիվ քննարկումներ է ունեցել ԵՏՄ իր գործընկերների հետ՝ առեւտրի հիմնական խոչընդոտ հանդիսացող ԱԱՀ-ի անկատար մեխանիզմների վերացման ուղղությամբ»,- ասաց վարչապետը: Նրա խոսքով, հարցը Հայաստանի նախագահի հետ քննարկելով, որոշել են վերանայել ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը, «Շուկայական հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի IFAD համաֆայնանսավորման շրջանակում ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամին պետբյուջեից կհատկացնի 173 մլն դրամի բյուջետային վարկ: Միջոցները կհատկացվեն մինչեւ 2016թ. դեկտեմբերը՝ 4 տոկոս դրույքով: Վարկը տրամադրվում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային ֆոնդի ծրագրի շրջանակներում, որի «Շուկայական հնարավորություններ գյուղացիների համար» ծրագիրն իրականացնում է հայրենական կազմակերպությունը: Ծրագիրը նախատեսված է ագրարային արտադրանքի զարգացմանը:

ՏԵՍՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է 5,5 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2016 թվականի հունվարին 5,5 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում են գրանցել առեւտրի շրջանառության, արտաքին առեւտրաշրջանառության ոլորտները: Սպառողական գների ինդեքսը նվազել է 0,4 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 6,3 տոկոսով: Շինարարության ծավալը կրկին աճել է 5,1 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 5,2 տոկոսով: 2015թ. հունվարի համեմատ, ընթացիկ տարում ծառայությունների ծավալն (առանց առեւտրի) աճել է 5,1 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 1,5 տոկոսով:

ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԿԱՐԻԵՆ ԽՈԴԻԿՅԱՆԻՆ, ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆԻՆ...

Հայաստանի գրողների միությունը մրցանակներ հանչնեց ստեղծագործական ակտիվ գործունեություն ծավալած եւ աչքի ընկած գրողներին:

Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակն ստացավ Սուսաննա Հարությունյանը: Լեւոն Շանթի անվան մրցանակին արժանացավ ծնունդով ախալքալաքցի Կարինե Խոդիկյանը, Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակին՝ Ֆելիքս Բախչինյանը, Ավետիք Իսահակյանի անվան մրցանակին՝ Դավիթ Հովհաննեսը, իսկ Միքայել Նալբանդյանի անվան մրցանակը հանչնվեց Սամվել Բեգլարյանին:

Գրողների միության մրցանակները հանչնեց միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԿԱՐԵՆ ՍՏԵԼՄԱՇՈՎԻ ՖՈՏՈԺՈՒԺԱՀԱՆԴԵՍԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

«Հայարտուն» կենտրոնի հյուրընկալ մթնոլորտում փետրվարի 20-ին, ախալքալաքցի Կարեն Ստելմաշովի 40-ից ավելի ֆոտոնկարների ստվար ու գունեղ հավաքածուն դիտելիս, հադիսատեսը, իր համար իսկ անսպասելի, ունեցավ մտքերի, զգացմունքների, ցանկությունների հաճելի հայտնություններ:

37-ամյա իրավաբան Կարեն Ստելմաշովի երկրորդ «մասնագիտությունը», ըստ ամենայնի, դարձել է լուսանկարչությունը: Այդ հաճելի գործով նա զբաղվում է արդեն 15 տարի:

Երեկոյի մասնակիցների համար հաճելի անակնկալ դարձավ Կարեն Ստելմաշովի իննամյա դուստր Անահիտ Ստելմաշովան, ում մասին գրել էր «Վրաստան» թերթը անցյալ տարի: Թբիլիսիի եւ Մարմարիս (Թուրքիա) քաղաքների «Ապագայի աստղեր», «Մեկ երկնքի տակ» միջազգային երաժշտական փառատոներին հաղթանակած աղջնակը ներկաներին հիացրել էր իր տաղանդով, իսկ այդ օրը Անահիտը հնչեցրեց Բախի, Ցինցածեի, Ցաբածեի, Դեզմոնդի ստեղծագործություններից:

Ցուցահանդեսին ներկա էին վրաց ուղղափառ եկեղեցու Ախալքալաքիի եւ Գումբուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզ Փաչուաշվիլին, Վրաստանում Հայաստանի դեսպանի տիկին Իրինա Տեր-Հովհաննիսյանը, դեսպանության մշակույթի գծով խորհրդական Էլինա Մկրտչյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, ճանաչված լուսանկարիչ Յուրի Մեչիտովը:

Ախալքալաքիի մշակույթի տան տնօրեն Վալերի Ստելմաշովը իր շնորհակալությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ը՝ ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐ

ՍԻՐՈՎ ՆՇՎԵՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Փետրվարի 19-ը Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդյան օրն է: Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի նախաձեռնությամբ եւ Թեմի առաջնորդարանի աջակցությամբ, ավանդույթ է դարձել ամեն տարի այդ օրը այցելել Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն եւ ծաղիկներ խոնարհել Մեծն Լոռեցու գերեզմանին: Այդպես էր նաեւ այս տարի:

Այդ օրը ավանդականորեն Հովհաննես Թումանյանի գերեզմանը ծաղիկներով զարդարելուց եւ այստեղ հանգչող մյուս մեծերի տապանաքարերին ծաղիկներ խոնարհելուց հետո, Հավլաբարի Սուրբ էջմիածին եկեղեցու հոգեւոր դասի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Բանաստեղծի գերեզմանի մոտ մայրաքաղաքի թիվ 104 հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության վաստակաշատ ուսուցչուհի Կարինե Հովհաննիսյանի սաները հանդես եկան Թումանյանի ստեղծագործությունների արտասանությամբ եւ թումանյանական պոեզիայից երգերի շնորհալի կատարումներով:

* * *

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալայի հանրային դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի Ծովինար Ֆարմանյանը խմբագրությանը հասցեագրված նամակում նշում է, որ Թումանյանի ծննդյան եւ գիրք նվիրելու միջազգային օրը մեծ շուքով նշվեց նաեւ իրենց դպրոցում (տնօրեն՝ Նելլի Դուդուկչյան):

Գրքերի միջոցով ենք մենք ճանաչում աշխարհն ու մարդկանց եւ այն ամենը, ինչ շրջապատում է մեզ...

Դամալայի հանրային դպրոցում փետրվարի 19-ին տեղի ունեցավ «Գիրքը պայքարի զենքն է» խորագրով միջոցառում՝ նվիրված գիրք նվիրելու օրվան:

Միջոցառումը կազմակերպել էր մայրենի լեզվի ամբիոնը: Ամբիոնի նախաձեռնությամբ եւ աշակերտների ակտիվ մասնակցությամբ դպրոցի գրադարանում վերանորոգվեցին հարյուրավոր հնամաշ գրքեր:

Աշակերտները սիրով եւ մեծ խանդավառությամբ կատարեցին այդ բարեգործական աշխատանքը: Աշխատելու ընթացքում նրանք թերթում էին գրքերը, կարծիքներ փոխանակում, որը հետաքրքրություն էր առաջացնում ու հնարավորություն տալիս ծանոթանալու գրքային հարստություններին՝ նրանց մեջ առաջացնելով ընթերցելու եւ այդ շնորհակալ աշխատանքը շարունակական դարձնելու ցանկություն:

Միջոցառման ընթացքում հնչեցին Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին նվիրված բանաստեղծություններ ու երգեր:

Դպրոցի տնօրեն Ն.Դուդուկչյանը իր շնորհակալական խոսքը հղեց աշակերտներին, ուսուցիչներին, գրադանավարուհուն, միջոցառման կազմակերպիչներին՝ ցանկանալով նրանց մեծ ուժ ու եռանդ, եւ պատգամեց սիրել, աչքի լույսի պես պահպանել գիրքը, քանի որ այն հանդիսանում է մարդկության հոգեւոր ուժերի զարգացման ամենահզոր զենքը, լայնացնում է մտահորիզոնը, կրթում ճաշակը:

«ԳՐՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ»՝ ԴՊՐՈՑՈՒՄ

«Գրքի հանրային ընթերցման համաշխարհային օրը» տոնը, որի նպատակը մեր ժամանակներում գրքի հանդեպ կորած հետաքրքրության վերածնումն է, այսօր նշվում է 100-ից ավելի երկրներում:

Տոնը առաջին անգամ նշվեց նաեւ Վրաստանում:

Տոնակատարությանը անմասն չմնաց Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպրոցը: Այստեղ, փետրվարի 24-ին տեղի ունեցավ Գրքի տոնին նվիրված ցերեկույթ: Կրթօջախի աշակերտները ընթերցեցին հատվածներ բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի՝ վրացերենից հայերեն եւ հայերենից վրացերեն թարգմանություններից, լսեցին Գիրք-արժեքի ունեցած դերի մասին բանաստեղծուհու ուսանելի խոսքը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է

Վրաստանի ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային դեպարտամենտը տեղեկացնում է, որ փետրվարի 25-ից Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը շուրջօրյա բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

«Վրաստան» թերթի խմբագրակազմը խոր վշտով զորակցում է թերթի աշխատակցուհի Սուսաննա Ավետյանին, սիրելի եղբոր՝

Ռոբերտ Լեւոնի ԱՎԵՏՅԱՆԻ

անժամանակ մահվան կապակցությամբ եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կաշվից պատրաստված գրանյութ: 8.Եթովպիական կայսրերի տիտղոս: 11.Կարմիր գույնի թանկարժեք քար: 12.Նահանգ ԱՄՆ-ում: 13.Գայլերի խումբ: 15.Ռուս երգահան: 17.Անկյունների չափման միավոր մաթեմատիկայում: 19.Թունավոր օձի տեսակ: 21.Գետ Հարավարեւելյան Ասիայում: 23.Թիֆլիսում նախկինում հրատարակվող հայկական օրաթերթ: 26.Վիրք: 28.Ֆրանսիացի գրող: 30.Վրաստանը «Եվրատեսիլ-2016»-ին ներկայացնող խումբ ... Քոչարով & Young Georgian Lolitaz: 31.Թեւի ուսագլխից մինչեւ արմունկը: 33.Ռուս բնագետ, սելեկցիայի տեսության հիմնադիրներից: 34.Մեծ քառաժայռ: 36.Հրացանի ծայրին ագուցվող խոցող սառը զենք: 39.Խոսքի մաս: 41.Հարվածային երաժշտական գործիք: 43.Ֆրանսիացի դրամատուրգ: 44.Փակցվում է պատերին՝ ագիտացիոն կամ գովազդային նպատակներով: 47.Հրակայուն կավի տեսակ: 49.Մոմակալ, ճրագակալ: 50.Հայ գրող Գրիգոր Տեր-Հովհաննիսյան: 51.Վրացի սումոիստ: 52.Դեկորատիվ շան տեսակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անզիջում պայքար, դիմադրություն: 2.Լավագույն, ընտրովի զորամաս: 3.Ծխելու արեւելյան հարմարանք: 4.Հարցաթերթիկ: 5.Քիմիական տարր, թեթեւ եւ փափուկ մետաղ: 6.Ամերիկացի նշանավոր հոգեբան: 7.Վրաց թագուհի: 9.Ընտանի անասուններ պահելու շենք: 10.Եկեղեցուց անջատված կրոնական համայնք: 14.Կայծքարով հրացանի մաս: 16.Ռուս տիեզերագնաց օդաչու: 18.Ազատ կյանք վարող կին հին Հունաստանում: 20.Անգլիացի փիլիսոփա-իդեալիստ: 22.Հասարակածային համաստեղություն: 24.Բանջարանոցային բույս: 25.Վրաստանում գործող ապահովագրական ընկերություն: 27.Աշխատավորական կոլեկտիվ: 29.Փայտիկներով նվագվող թմբուկի տեսակ: 32.Իտալացի օպերային երգիչ: 35.Պահակակետում հսկող զինվոր: 37.Հռոմի պապի նստավայրը: 38.Հնդիկ մտածող, Վեդանտայի նշանավոր ներկայացուցիչ: 40.Ֆրանսիացի դրամատուրգ, «ֆրանսիական ողբերգության հայրը»: 41.Պետության կողմից տրվող նպաստ: 42.Թմրանյութի տեսակ: 45.Ռազմական զրահապատ մեքենա: 46.Զորքերը կառավարող հրամանատարական մարմին: 48.Կրծող կենդանի:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սուսան: 6.Լարս: 10.Լեւան: 11.Աջարիա: 13.Ածխաթթու: 16.Ես: 18.Լաս: 20.Նանի: 21.Լուսնթագ: 24.Լաք: 25.Աքրա: 27.Տա: 29.Վոլտ: 32.Օրի: 33.Աբել: 34.Նեղոս: 37.Նոնա: 38.Արմինե: 40.Ար: 43.Կից: 44.Ալ: 45.Որոտան: 48.Ապարան: 52.Ձեբ: 54.Ադանա: 56.Արար: 58.Նիագարա: 60.Ուղտ: 61.Նիկո: 62.Սուս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ուրան: 3.Արիա: 4.Վեգա: 5.Հարթ: 7.Ակսել: 8.Սիրաս: 9.Կարեն: 12.Ածել: 14.Թինա: 15.Ուսամա: 17.Սանա: 19.Արազի: 22.Ուրալ: 23.Ջավեն: 26.Քնար: 27.Տեղացի: 28.Գաթա: 30.Ոլորան: 31.Տնակ: 32.Օսման: 35.Որ: 36.Մել: 39.Նագ: 41.Ռոպե: 42.Կոր: 46.Ռաբունի: 47.Տակ: 48.Աջանի: 49.Լարա: 50.Նամուս: 51.Կինտո: 53.Երակ: 55.Արուս: 56.Ագի: 57.Արո: 59.Ան:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445